www.mediaforedu.am
Տեղեկատվական-վերլուծական կայք
Երևան, Հայաստան

ՀՀ ԿԳՄՍ նախարար

Ժաննա Անդրեասյանին

Հարցում

Հարգելի տիկին նախարար,

ՀՀ Կառավարության 2026–2031 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի հավելվածում ներառված է «Հանրակրթության բովանդակության պարբերական փաստահենք վերանայման մեխանիզմի ներդրում» միջոցառումը: Դրա համաձայն՝ պետական և առարկայական չափորոշիչները, ծրագրերն ու դասագրքերը պարբերաբար վերանայվելու են՝ հիմնվելով PISA-ի, TIMSS-ի, ազգային գնահատումների և քննությունների արդյունքների համակարգված վերլուծության վրա: Միաժամանակ, միջոցառման ֆինանսավորման աղբյուրի վերաբերյալ նշված է՝ «Հավելյալ ֆինանսավորում չի պահանջվում»:

Հաշվի առնելով միջոցառման ծավալն ու նախատեսված արդյունքները՝ խնդրում եմ պարզաբանել.

1. «Հավելյալ ֆինանսավորում չի պահանջվում» ձևակերպման պարագայում ի՞նչ ֆինանսական և կազմակերպական ռեսուրսների հաշվին են իրականացվելու միջազգային և ազգային գնահատումների արդյունքների վերլուծությունը, վերլուծական զեկույցների պատրաստումը, կրթական չափորոշիչների ու ծրագրերի վերանայումը, ինչպես նաև դպրոցներում դրանց փորձարկումն ու գնահատումը:

2. Արդյո՞ք նախատեսվում է գործընթացում ներգրավել անկախ հետազոտական կազմակերպությունների, բուհերի, ոլորտի փորձագետների և գործող ուսուցիչների, թե՞ աշխատանքներն իրականացվելու են նախարարության և ենթակա կառույցների գործող աշխատակազմի ուժերով: Եթե նախատեսվում է արտաքին մասնագիտական կամ միջազգային փորձագիտական աջակցություն, ինչպե՞ս է այն ֆինանսավորվելու:

Digitally signed by ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
5307760450
2026-11-23 16:12:55 GMT+04:00

3. Ի՞նչ չափելի ցուցանիշներով և ինչ հաճախականությամբ է գնահատվելու մեխանիզմի արդյունավետությունը, և ինչպե՞ս է ապահովվելու, որ PISA-ի, TIMSS-ի և ազգային գնահատումների արդյունքների վերլուծությունը հանգեցնի ոչ միայն զեկույցների հրապարակման, այլև կրթական չափորոշիչների, ծրագրերի և դասագրքերի բովանդակային բարելավմանը՝ սահմանված ժամկետներում:

Խնդրում եմ հարցման յուրաքանչյուր կետին տրամադրել առանձին, հստակ և ըստ էության պատասխան՝ պահպանելով հարցերի համարակալումն ու հերթականությունը և չսահմանափակվելով ընդհանուր բնույթի պարզաբանումներով, ինչպես դա տեղի է ունեցել նախորդ հարցումների պատասխաններում՝ բացառությամբ վերջին պաշտոնական պատասխանի:

Հիշեցնում եմ, որ տեղեկություններ ստանալու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով, իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գրավոր հարցման պատասխանը տրամադրվում է հարցումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Անուշ Մարտիրոսյան

mediaforedu.am կայքի խմբագիր

23.11.2026 թ.